

Պայմանագիր

«Մեղու. հայերենը բոլորի համար» մրցույթին առցանց հարթակում
բաժանորդագրվելու մասին

ք. Երևան

06 հոկտեմբերի, 2022 թ.

«Այբ» կրթական հիմնադրամը՝ ի դեմս գործադիր տնօրեն Ս. Կոչեցյանի (այսուհետ՝
Հիմնադրամ), մի կողմից և _____-ն՝ ի դեմս
տնօրեն _____ (այսուհետ՝ Դպրոց), մյուս կողմից, կնքեցին սույն
պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրի շրջանակում Դպրոցին տրամադրվում է Հիմնադրամի կողմից
առցանց հարթակում 2022-2023 ուս. տարվա ընթացքում կազմակերպվելիք «Մեղու.
հայերենը բոլորի համար» մրցույթին (այսուհետ՝ Մրցույթ) բաժանորդագրվելու
հնարավորություն (այսուհետ՝ Ծառայություն), իսկ Դպրոցը, ըստ իր ուսումնական
հաստատությունում սովորող աշակերտների քանակի (50-149, 150-500, 501-999, 1000 և ավելի),
Հիմնադրամի կողմից մատուցված Ծառայության դիմաց պարտավորվում է վճարել սույն
պայմանագրի 3.1 կետում նշված գումարը:

1.2. Հիմնադրամը պարտավորվում է առցանց հարթակում Մրցույթը կազմակերպել՝
համաձայն սույն պայմանագրով նախատեսված պայմանների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հիմնադրամը պարտավորվում է՝

2.1.1. գրավոր կամ բանավոր տեղեկացնել Դպրոցին Մրցույթի մեկնարկի, գրանցման
ձևաչափի և ժամանակահատվածի մասին.

2.1.2. կազմակերպել և վերահսկել Մրցույթի հիմնական փուլի, ինչպես նաև վերստուգիչ
փուլերի անցկացումը.

2.1.3. տեղեկացնել Դպրոցին վեբինարների, վերապատրաստումների և այլ միջոցառումների
անցկացման մասին՝ Էլ. նամակի, սոցցանցերում հայտարարությունների և զանգերի
միջոցով.

2.14. վերադարձնել Մրցույթի մասնակցության գումարը, եթե Դպրոցը հրաժարվել է Մրցույթի մասնակցությունից, և դրա մասին գրավոր տեղեկացրել Մրցույթի անցկացման օրվանից առնվազն 35 օր առաջ:

2.2. Հիմնադրամն իրավունք ունի՝

2.2.1. սահմանել Մրցույթի անցկացման կարգը, վայրը, ժամանակը և ձևաչափը.

2.2.2. փոփոխել Մրցույթի անցկացման կարգը, վայրը, ժամանակը և ձևաչափը՝ այդ մասին նախապես՝ այդ փոփոխությունից առնվազն 10 (տասը) օր առաջ, գրավոր կամ բանավոր տեղեկացնելով Դպրոցին.

2.2.3. տրամադրել Դպրոցին հավելյալ գովազդային նյութեր՝ Մրցույթի մասին տեղեկությունը տարածելու համար.

2.2.4. նախաձեռնել վեբինարներ, վերապատրաստումներ և այլ միջոցառումներ Դպրոցի աշակերտների, ուսուցիչների և աշխատակազմի համար.

2.2.5. Դպրոցի տարածքում անցկացված Մրցույթի ժամանակ հայտնաբերված խարդախության դեպքերի վերաբերյալ նախազգուշացնել Դպրոցին և բազմակի դեպքերի հայտնաբերման դեպքում որակազրկել աշակերտներին ու կասեցնել Դպրոցի անդամագրությունը Մրցույթին՝ չվերադարձնելով Դպրոցի կողմից Մրցույթին անդամակցելու համար Հիմնադրամին փոխանցված գումարը:

2.3. Դպրոցն իրավունք ունի՝

2.3.1. Մրցույթի մասնակցության մեջ ներգրավել իր 3-12-րդ դասարանների բոլոր աշակերտներին.

2.3.2. հասանելիություն ստանալ հարթակով, կայքով և այլ եղանակներով տրամադրվող կրթական նյութերին.

2.3.3. անվճար մասնակցել վեբինարներին և կազմակերպվող այլ միջոցառումներին և առցանց հանդիպումներին.

2.3.4. մասնակցել ուսուցչական համաժողովներին.

2.3.5. մասնակցել վերապատրաստումներին (օրինակ՝ «Քան» ակադեմիայի գործիքների կիրառություն դասարանում, առցանց գործիքների կիրառություն և այլն).

2.3.6. հասանելիություն ստանալ առցանց փորձնական թեստերի ժամանակ Մրցույթին գրանցված 3-12-րդ դասարանների աշակերտների համար.

2.3.7. հրաժարվել Մրցույթի մասնակցությունից՝ Մրցույթի անցկացման օրվանից 35 օր առաջ դրա մասին գրավոր տեղեկացնելով. հակառակ դեպքում մասնակցության վճարը վերադարձման ենթակա չէ:

2.4. Դպրոցը պարտավորվում է՝

2.4.1. պայմանագրով նախատեսված ժամանակացույցով կատարել բաժանորդագրության վճարում(ներ)ը մինչև 2022 թվականի հոկտեմբերի 20-ը ներառյալ.

2.4.2. նշանակել մրցույթի պատասխանատուին (Դպրոցի կողմից նշանակված պատասխանատու անձ՝ կազմակերպիչ) և փոխանցել պատասխանատուի տվյալները (հեռախոսահամար, Էլ. հասցե) Հիմնադրամին.

2.4.3. հավաքել Դպրոցում Մրցույթին մասնակցելու ցանկություն հայտնող աշակերտների տվյալները և դրանք ցուցակագրելով՝ Հիմնադրամի կողմից նախապես տրված ցանկով, ուղարկել Հիմնադրամին meghu@ayb.am Էլ. հասցեով մինչև 2022 թվականի նոյեմբերի 10-ը ներառյալ.

2.4.4. իրազեկել աշակերտներին և նրանց ծնողներին Մրցույթի և դրա անցկացման կարգի մասին՝ հայտարարություններ տարածելով դասարաններում և օգտագործելով տվյալ ուսումնական հաստատությունում կիրառվող Էլեկտրոնային գործիքները (ֆեյսբուքյան Էջ, դասարանների վայբերյան խմբեր, տեղեկատվության այլ միջոցներ).

2.4.5. տարածել Մրցույթին մասնակցելու գրանցման ուղեցույցները Էլեկտրոնային տարբերակով, 3-12-րդ դասարաններում (քոլեջների պարագայում 1-3-րդ կուրսերում).

2.4.6. աշակերտներին իրազեկել վեբինարների և այլ հնարավոր միջոցառումների ժամանակացույցի մասին.

2.4.7. պայմանների առկայության դեպքում (համացանցի հասանելիություն և սարքերի առկայություն) Մրցույթի հիմնական, ինչպես նաև վերստուգիչ փուլ(եր)ն անցկացնել Դպրոցում:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրային գումարը _____ ՀՀ դրամ է, որը ձևավորվում է 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում Դպրոցում սովորող աշակերտների՝ emis.am կայքից դուրս բերված փաստացի քանակից՝ համաձայն ստորև տրված սանդղակի:

Դպրոցում աշակերտների թիվը	Բաժանորդագրության գումարը, ՀՀ դրամ
1000 և ավելի	60 000
501-999	40 000
150-500	35 000
50-149	25 000
49-ից պակաս	15 000

3.2. Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը Դպրոցը վճարում է Հիմնադրամին՝ վերջինիս բանկային հաշվեհամարին փոխանցելու, առցանց հարթակում բանկային քարտով վճարելու կամ նվիրաբերությամբ ստացվող վճարի միջոցով, որի մասին պետք է Հիմնադրամին լրացուցիչ տեղեկացնել սույն պայմանագիրը ստորագրելու պահից սկսած 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը պետք է իրականացվի ՀՀ դրամով:

3.3. Պայմանագրում կատարվող փոփոխությունների կամ լրացումների համար կարող են կազմվել պայմանագրին կից հավելվածներ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն երկկողմանի ստորագրելու պահից և գործում մինչև 2022-2023 ուս. տարվա ընթացքում կազմակերպվելիք Մրցույթի ավարտը:

4.2 Պայմանագիրը կարող է ստորագրվել Էլեկտրոնային ստորագրությամբ և պահպանվել կողմերի մոտ Էլեկտրոնային տարբերակով, ինչը չի զրկում սույն պայմանագիրն իրավական ուժից:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի կատարման ընթացքում ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով, նաև միջնորդ դատարանում, որի ընտրության մասին կողմերը կազմում են լրացուցիչ համաձայնագիր՝ համաձայն ՀՀ օրենքների:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԱՆՀԱՐԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (\$ՈՐՍ ՄԱԺՈՐ)

7.1. Սույն պայմանագրով պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է սույն պայմանագիրը կնքելուց հետո ծագած անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի

իրավիճակներ են երկրաշարժերը, ջրհեղեղները, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց ղեկավարների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Այն կողմը, որի պարտականությունների կատարումն ընդհատվում է այդ պատճառներով, պարտավոր է ծանուցել մյուս կողմին պարտականությունների ընդհատման կամ չկատարելու և դրա պատճառների մասին: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.2. Սույն պայմանագրում փոփոխություններն ու լրացումները կատարվում են կողմերի համաձայնությամբ, համապատասխան արձանագրություններով և համաձայնագրերով, որոնք կնքված են կողմերի իրավասու ներկայացուցիչների կողմից: Պայմանագրում կատարված փոփոխություններն ու լրացումները սույն պայմանագրի անբաժանելի մաս են:

8.3. Հիմնադրամը պատասխանատվություն է կրում առցանց հարթակում Մրցույթի կազմակերպման ընթացքում տեղադրված տեղեկույթի՝ իրականությանը համապատասխանելու համար:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐՆ ՈՒ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Այբ» կրթական հիմնադրամ

ՀՎՀՀ՝ 01558429

Իրավ. հասցե՝ ք. Երևան, Թբիլիսյան խճ. 11/11

Գործ. հասցե՝ ք. Երևան, Ազատության 1/21-1

Հ/հ 1930055663050100

«Կոնվերսանկ» ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝

Տնօրեն՝

Ս. Կոչեցյան _____
